


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համ. 3 ՄՅՃ.
Գաւառացի 10 ՄՅՃ.
Վեցստան Կ. Պոլսոյ 4 ՄՅՃ.
Գաւառացի 5 ՄՅՃ.
Մանուկան տուր մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար գատ տակարարութիւն կըլ-
այ :



ՄԱՐԿԻՆ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ած արքայ թմբակաւ թիւ 1-ը
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն թմբակ-
—Տնարկն ալ տի ուղղութիւն, Ղալա-
միա Սանարքընար ճատակաւ թիւ
198-ը, Կորս խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱՆԴՆՈՒԹՅԱՆ 19-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հեռագրական լուրերը մէկ եր-
կու օրէ 'ի վեր կարեւորութենէ զուրկ
են : Եւր Սիւի խան Ռուսաց հողը հա-
սեր է և իւր որդին Եագուպ խան
ճէրալապատ գնացեր է անշուշտ Անգ-
ղիացոց հետ բանակցելու համար :
Եւր Սիւի խանին ընկերացած է Ռու-
սաց Աֆղանստան զինուորական
թիւնը : Բայց կը մնայ տեսնել թէ
արդեօք Ռուսիա Եւր Սիւի օգնու-
թիւն պիտի տայ՝ կորուսեալ գահը նո-
րէն ստանալու համար : Գուցէ Ռու-
սիա Եւր Սիւի խանը պիտի պահէ, որ-
պէս զի եթէ Անգղիոյ հետ իւր յա-
րաբերութիւններն օր մ'աւրուին,
զոյն Աֆղանստանի գահուն պահան-
ջող մը ներկայացնէ և Հնդկաստանի
գէմ սպառնալիցայ միջոց մ'ընէ : Բայց
այժմանմիջական օգնութիւն հաւա-
նական չ'ընդունիր, և խեղճ Եւր Սիւի եր-
կու տէրութեանց մէջ ազդեցութեան
միջոցն ինչպէս նաեւ իւր տգիտա-
կան ընթացից զոհ կերթայ :

Ահաւասիկ երկու մեծ տէրու-
թիւն, որ Ասիական իշխանութեան մը
վրայ իրենց ազդեցութիւնը փորձե-
լու կեննեն, և Եւր Սիւի կրնակին վը-
րայ կը կռուին : Մին դեպքան կըզըր-
կէ և ընդունել կուտայ, յորդորելով
միանգամայն որ միւսին դեպքանը մեր-
ժէ : Իսկ միւսը կը պնդէ թէ պէտք է
որ իւր դեպքանն ևս ընդունուի :
Ուստի մրցումը կատարեալ ըլլալու
համար զօրախումբ մը կ'ընկերացնէ
իւր դեպքանին : Կը մերժուի և պա-
տերազմ կը հրատարակէ : Իրօք Եւր
Սիւի խան չէր կրնար, ըստ միջազգա-
յին իրաւանց, Անգղիոյ դեպքանը մեր-
ժել : Բայց Ասիական իշխանը միջազ-
գային իրաւունք չեն գիտեր, և ըստ
քմաց կը շարժին Անգղիա որոշեց ան-
պատճառ այս թշնամանց պատիժը
տալ և տուաւ, բայց հիմայ ինչ պի-
տի ընէ Աֆղանստանի փիճակը : Լորտ
Պիքոնսֆիլտ խորհրդարանին մէջ ը-
սաւ թէ Հնդկաստան « գիտութեան
սկզբանց համեմատ սահմանի պէտք
ունի » և իւր այս խօսքն այսպէս բա-
ցատրեց : Գիտութեան սկզբանց հա-
մեմատ սահման մը պահելու համար
5000 զօրք կը բաւէ, մինչդեռ եթէ
այնպիսի սահման մը չըլլայ, երկու
հարկը հազար զօրք երբեմն անբա-
ւական կըլինի : Օրինակի համար, քա-
նի մը կրնան և ամուր գերբերք գը-
րաւելով կարելի է բազմաթիւ թըշ-
նամանց գիւմարել, մինչդեռ հարթ
և բաց սահմանի մը վրայ շատ զօրք
անկարող կը լինի ամեն գերբերք պա-
հելու : Հնդկաստանի սահմանին մէկ
մասն այս փիճակին մէջ էր : Կիրճեր

և լեռներ բռնող աւազակ ցեղեր Հնդ-
կաստանի ճոխ դաշտերը կիջնէին և
աւարառութիւն կը գործէին : Անգ-
ղիա այս վիճակին վերջ պիտի տայ
այն կիրճերն ինք գրաւելով : Բայց
Անգղիոյ և Ռուսիոյ մէջ պայման մը
գործած էր, որոյ համեմատ իրենց
զօրութիւնն իրարու չբաղխելու հա-
մար չեղօք դիմ մը հաստատել կու-
ղէին, որ Աֆղանստան պիտի լինէր, և
երբ Անգղիա Ռուսիոյ յառաջխաղա-
ցումէն կասկածելով գիտողութիւն
ներ կընէր, Ռուսիա կը պատասխանէր
թէ իւր գրաւելները վայրենի են, մի-
ջազգային իրաւունք չեն ճանչեր և
աւազակութիւն կընեն : Ուստի կը
պարտաւորի զինու զօրութեամբ պա-
տէժ դանտը : Անգղիա նոյն առաւ-
կութիւնները կրնայ ընել այժմ Աֆ-
ղանստանի նկատմամբ, եթէ Ռուսիա
իրեն գիտողութիւն մ'ուղղէ : Սակայն
մինչև ցարդ տակաւին լուր մը չկայ
այսպիսի գիտողութեան մը նկատմամբ :
Այս երկու մեծ տէրութեանց մրցումը
փոխանակ ուղղակի դէմ առ դէմ պա-
տերազմելու ուրիշ բան չեղաւ, բայց
եթէ երբ մին տեղ մը գրաւէ, միւսն
ևս հաւասարակշռութիւնը հաստա-
տելու համար ուրիշ տեղ մը գրաւե-
լու սկզբան գործադրութիւնը : Եթէ
Ռուսիա քանի մը տեղեր չահեցաւ,
Անգղիա կ'իպրոսն առաւ : Եթէ Ռու-
սիա վերին Ասիոյ մէջ խիվայի, Գօքան-
տի և Պուխարայի կողմերն երկրակա-
լութիւն ըրաւ, Անգղիա Աֆղանստա-
նի կը տիրէ ուղղակի կամ անուղղա-
կի, և գիտութեան սկզբանց համե-
մատ իւր սահմանները պիտի ուղղէ :
Միթէ Լորտ Պիքոնսֆիլտ չքաւ թէ
Ասիա բաւական ընդարձակ է երկու
տէրութեանց համար : Իրաւ է որ
Անգղիոյ նախարարը կը յայտարարեն
թէ իրենք երկրակալութեան միտք
չունին, սակայն անսահման կերպիւ
երկիր կը գրաւեն :

Երկու տէրութեանց այս ընթաց-
քին հետեւանք թուրքիոյ մէջ ևս
տեսնուեցաւ, և տակաւին կը շա-
րունակէ : ամեն անգամ իրարու գէմ
նախանձընդդէմ մրցում մը կընեն,
որոյ վնասը միշտ մեք կը կրենք : Ո՞ր
մնաց Լորտ Սալիզբըրիի հռչակաւոր
ժանուցադրին, որոյ մէջ Այսթեֆա-
նոսի դաշնադրութեան գէմ կը բո-
ղոքէր : Վեհաժողովին մէջ ազնիւ
Լորտն այն ծանուցադրին բազմաթիւ
կէտերը բարձի թողի ըրաւ : Այժմա-
մեն օր կը լսենք թէ Պէրլինի դաշ-
նադրին գործադրութիւնը կը պա-
հանջուի : Բայց արդեօք կարելի՞ է
դաշնադիրը լիովին գործադրել ըս-
տոյգ է որ այն պայմաններն որք զի-
նու զօրութեամբ պիտի գործադրե-
ւէին իրողութիւն եղան, Ռուսիա Օս-
մանեան Դամուրի ամրոցներն և Պա-
թումն առաւ : Աւստրիական զօրքը

Պոսնիա և Հէրսէք մտաւ : Բայց տա-
կաւին բազմաթիւ խնդիրներ կան,
որոց մին է Հելլենականը : Բ. Դուռն
և Գունաստան իրենց երեսփոխան-
ներն անուանեցին, և կը մնայ տես-
նել թէ երբ պիտի կրնայ համաձայ-
նութիւն մը գոյանալ : Ամենէն կընճ-
ուտը Ռուսիոյ հետ վերջնական դաշ-
նադրութեան խնդիրն է, որոյ լու-
ծումէն կախումն ունի Թուրքիոյ ի-
րական խաղաղացումը : Դժբաղդա-
բար՝ մինչև հիմայ տակաւին այս նը-
կատմամբ մեծ յառաջդիմութիւն մ'
եղած չէ : Ռուսիա ահագին դուժար
մը պատերազմական տուգանք կը
պահանջէ, մինչդեռ Թուրքիոյ շըր-
ջաբերութեան գլխաւոր միջոցն ե-
ղող թղթադրամին արժէքը պահելու
համար պէտք եղած ստակն անգը-
տանելի է . . . :

Սերպիոյ իշխանը դեկտ. 2/14-ին
ազգային ժողովը բացաւ : Նիշի մէջ,
և իւր աստեղծութեամբ դուրս
սերպիական աղբն, որ իւր զինուո-
րական առաջնութիւնները փառա-
ւորապէս ցոյց տուաւ պատերազմի
դաշտերուն վրայ : Այժմ խաղաղու-
թիւնը վերադարձաւ, և իշխանը փա-
փաքեր է որ ազգային ժողովն հին
և հռչակաւոր Նիշ քաղաքը գումա-
րի : Անգլ. ուր հինգ դար առաջ Սեր-
պիոյ անկախութիւնը կորսուած էր,
այժմ անկախ Սերպիոյ առաջին ազ-
գային ժողովը կը բացուի : « Մեք,
կըսէ իշխանն, հին Սերպիոյ հողին
վրայ ենք, մեր նախնին փառաց և
զօրութեան որդանին, այն հողին »
որոյ մէջ մի կտորը նուիրական է Սեր-
պիոյ համար, քանզի դարերէ 'ի վեր
իւր թանկագին արեամբ շաղուած
է : անդ ամեն մէկ քայլ փառաւոր
և տխուր անցեալ մը կը յիշեցնէ :
Յետոյ իշխանը կ'ողջունէ Սերպիոյ
հետ միացեալ նոր անդամներն, ո-
րոց իբրեւ ազատարար կը ներկայանայ
նախ գէն 'ի ձեռին և այժմ ձիթեն-
եաց ոստով : Արեւելից մէջ տակաւին
խաղաղութեան յայտերը վրդովող նը-
շաններ կան, կըսէ, որք ուրիշ բան
չենք : Բայց եթէ սաստիկ փոփոխի մը
վերջին յուզմունքն, այսու ամենայ-
նիւ, եթէ նոր գէտերք ծագին, իշ-
խանը կը յուսայ որ Սերպիական հայ-
րենիքն յարձակումէ կրնայ պահուիլ
և մեծ տէրութեանց Սերպիոյ վրայ
փտահալութիւնն ամրապնդիլ :

Աւստրիոյ կայսրն ևս Հէրսէքի և
Պոսնիոյ իսլամ, Օրթոտոքս, կաթո-
լիկ և Հրեայ պատուիրակներն ընդու-
նեց, և անոնց հաւատարմութեան
ուղերձին պատասխանեց : Ապտուլ-
րակները ցաւ յայտնեցին անմիտ և
մոլեռանդ գիմարութեան մը վրայ,
և յուսալով որ Աւստրիական պետու-
թիւնը միայն կրնար անգործութիւն
հաստատել իրենց վրդովեալ երկրին

մէջ, կայսերական դերձատանին
բարօրութիւն մաղթեցին : Պոսնիոյ և
Հէրսէքի մէջ 1879 տարւոյն զինուո-
րական ծախուց համար խորհրդարա-
նին պատուիրակութիւնը 20 միլիոն
ֆիորին յատկացուց :

Հիճրէթի նոր տարւոյն առթիւ
շարաթ օրը երբեք պալատն եղած
ընդունելութիւնն այս տարի Եւրո-
պական կերպարանք մ'առաւ :

Տէրութեան նախարարները, բարձ-
րաստիճան իւլէմաներն և մինչև Պա-
լայի աստիճան ունեցող պաշտօնա-
տարք երբեք պալատին մէջ չէին
Սուլթանին ներկայանալով, Սեմ Ե-
պարքոս Բարձր, Խայրէտուլին Բաշա,
ներկայացնող խնդակցութիւնն ու
բարեմաղթութիւններն հետեւեալ կեր-
պիւ յայտնեց :

« Վեհափառ Տէր .
« Ձեր Տէրութեան նախարարներն
ու բարձր պաշտօնաւորները նոր տար-
ւոյ առթիւ իրենց բարեմաղթութիւն-
ները Ձեր Կ. Վեհափառութեան կը
ներկայեն : Ձեր ծառան երջանիկ կը
համարի զինքն՝ որ անոնց թարգման
լինելու և այս պարտականութիւնը
կատարելու բարձր պատիւն ունի :
« Այս պարտականութիւնը չկրցաւ
կատարիլ անցեալ տարի 'ի մեծ ցաւ
սրտի Ձեր ծառայից : Այս անգամ՝
բարեբաղդ են և շնորհակալ, որ կա-
տարելու համար ձեր Կ. Վեհափա-
ռութեան ներկայութեանը կընդուն-
ւին :

« Տայ Աստուած որ նոր տարին
բարօրութեան և յառաջդիմութեան
սկիզբ մ'ըլլայ Ձեր Վեհափառութեան
հովանւոյն ներքեւ : »

Վեհ. Սուլթանն հետեւեալ պա-
տասխանը տուաւ .

« Շնորհակալ եմ Ձեր բարեմաղ-
թութիւններէն : Իմ միակ փափաքս
« է մեր պետութեան մեծութիւնն ու
« զօրութիւնն և ազդին բարօրութիւ-
« նը տեսնել : Ասոր համար ամենուն
« օժանդակութեանն ու գործակցու-
« թեան վրայ կը դնեմ վստահու-
« թիւնս :

« Ձեզ յիշեմ—Եպարքոսութեան
« պաշտօնին կոչելուս պատճառով՝ ձեր
« ուղղութեան ու յաջողութեան
« վրայ անտարակոյս լինելու էր : Գոր-
« ծերը կարգարացնեն իմ համոզումս
« և շատ դժ եմ :

« Կարգեմ զԱստուած որ նոր տա-
« ռիս՝ խաղաղութեան բարեկարգու-
« թեան և յառաջդիմութեան նոր
« դարադրութիւն մը բանայ մեր երկրին
« համար, որ պէտք ունի աղոթեց :

« Ամենակարն Աստուած յաջողու-
« թեամբ պատկէ մեր ամենու ջան-
« քը մեր պետութեան բարօրութեան
« նը համար : »
Վեհ. Սուլթանն հետեւեալ մին-

չև հիմա պահուած արարողութեան, հաճեցաւ իւր գիմարը կէս չըջնա- կածն կանգնած խաւարացի և պաշ- տոնաւորաց առջևէն անցնել և իւ- րաքանչիւրին սիրալիւ խօսքեր ուղ- ղել:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 28 դեկտ.

Վաթսուն հազար դրոժաւորք աշխա- տութիւնը դարեցնել կ'սպանան Եօթը- չայրի և Լանքայայրի մէջ:

Սթանտարտ կը ծանուցանէ թէ Աֆ- զանտանայ Էմիրը Բուսայ հողը հասեր է:

Փարիզ 23 դեկտ.

Նատիօնալ լրագիրը կը հաստատէ թէ Թունուզի մէջ պատահած դէպքը քիչ օ- րէն պիտի պարզի և վերջանայ:

Բեռլին 29 դեկտ.

Կօստլրագիրը Բուսայի սահմանը Վիս- թուլէն մինչև Հնդկաստան տարածելու աշխարհագրութիւնն հակառուս կը նը- կատէ:

Նիւ Եօթը 28 դեկտ.

Ապրտամբութեան փորձ մ'եղաւ Մէք- սիկայի մէջ, բայց զսպուեցաւ: 80 մարդ կախուեցան:

Այս առաջը հասած հետաքննչ:

Պէրլում 30 դեկտ.

Միլան իշխանին կենաց դէմ վերջին նոյ. ամսոյ մէջ փորձուած դաւաճանու- թեան ոճրին համար պաշտօնական ամ- րատանադիր եղաւ Գարաեօրկէվիչի դէմ:

Գահիրէ 30 դեկտ.

Եգիպտոսի Երեսփոխանական Ժողովը այսօր բացուեցաւ:

ԼաՀօր 30 դեկտ.

Ճէլալապատի մէջ բանակցութիւնը բացուեցան Եագուպ խանին հետ:

Ռուսիոյ զօրավարն յայտնեց անոր թէ Ռուսումի հովտին մէջ ընդհանուր ցե- ղերն Անգղիոյ հպատակ են:

Խէլաթի խանն Անգղիացուց հետ մի- անալու փախը յայտնեց:

Լոնտրա 30 դեկտ.

Թայմը կը ծանուցանէ թէ Եագուպ խանին Ճէլալապատ հանելու լուրը սը- խայ է: Բնաւ տեղեկութիւն չիայ ոչ է- միրին և ոչ Եագուպ խանին վրայ:

Խէլաթի խանն առաջարկեց իւր զօր- քերն անգղիական զօրաց ընկերացնել՝ երբոր Քանտահարի վրայ քայլեն:

Լոնտրա 30 դեկտ.

Օսմ. Քօնս.	11 9/16
Փոթ.	1865 14 3/4
»	1869 11 3/8
»	1871 52 3/4
»	1872 22
»	1873 12 3/4
» Կղկալ.	71 1/2
Անգլ. Քօնս.	95 1/16

Փարիզ 30 դեկտ.

Օսմ. Քօնս. 11,67 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախորդ Մեծ-Եգարքոս Բարձր- Սահման փառանք փարիզի դեսպան անուանելուն առթիւ կիրակի օրը Վեհ. Սուլթանին ներկայացաւ և քանի մ'օ- րէն պիտի մեկնի մայրաքաղաքէս:

Մայրաքաղաքիս դեսպաններն՝ Հիճրէթի և Գրիշակի տարեգրութե- ներուն զուգարդիպութեան առթիւ վաղը Վեհ. Սուլթանին պիտի ներ- կայանան հանդիսաւոր կերպիւ:

Վեհ. Սուլթանն Ա. Կարգի Մեծի- տիէ պատուանշան շնորհեց կաթոլիկ Գրիշակներու Պատրիարք Գեր. Պետ- րոս իրիսա էֆէնտիին:

Ոստիկանութեան նախարար Սաֆ- վէթ վաշան Ֆաթիմի թաղը Չինճիր- լի Գուլուշի կողմը քանի մը տուն կո- լանով՝ խաղ (խուճար) խաղացողներ բռնեց:

Ն. Վսեմութիւնը Բերայի մէջ ալ օտարազգի դարբին մը ձերբակալեց, որ տուններու և խանութներու կըլ- պանքներու կաղապարն առնելով սուս- քանակներ կըշինէր գողերու համար:

Թղթադարմն այս օրերս տալա- տայման կերպիւ ինչպիսի հացին դի- նը մինչև ութ զոյ բարձրանալուն վը- րայ Բ. Գուռն օրոյնց որ մինչև որ թղթադարմին ընթացքը կ'անհաւո- րելու միջոց մը տնօրինուի, մայրա- քաղաքիս մէջ և չըջնալոյն հացին հօխան 6 1/2 զրոյի վաճառուի, և ա- լելին հացագործները Բաղաքապե- տութենէն ստանան:

Եւ որպէս զի հացագործք չկրնան խարդախութիւն մ'ընել, քաղաքա- պետութեան գործակալներէն յա- տուի տեսուչներ կարգեցան, որք ամեն թաղի իմամներուն և մըքտար- ներուն հետ մէն մի փուան հանած հացին քանակութիւնն ամեն օր ըս- տուցելով ցուցակ մը պիտի չինեն, և ամեն իրիկուն ստորագրելով քաղա- քապետութեան պիտի ներկայացնեն: Խարդախութիւն ընողները խաղիւ պիտի պատժուին:

Կըսուի թէ խալի Շէրիֆ փաշա- յին ուղեղի հիւանդութիւնը ծանրա- նալով, բժշկաց առաջարկութեամբ հսկողութեան ներքեւ դրուել է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
Է Ս Չ Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
18 դեկտ. Երկուշաբթի իրիկուն	12.31
19 դեկտ. Երեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	12.29
կէս օրին	12.26
Բուսայի երկաթուղի	Փր. 44 25
Թղթադարմ	Լր. 470

ԸՆԹԱՅՐ ԱՐԺԱԲՊՈՅ	
Կ. Պօլիս 18 դեկտեմբեր	
Ստիթէ Ժէնէրալի բաժ. Անգլ. Լր.	4.18
» Փոխանակութեան	3,
Կ. Պօլսոյ Պանքային	6, 5
Քրէտի Ժէնէրալ	4.35
Քրէտի Օսթրո-թիւրք	—
Փոթ.	1863 30, 70
»	1865 72
»	1869 68
»	1872 21 30
»	1873 62
Թրամուայ	Օսմ. Լր. 1 30

ԸՆԹԱՅՐ ԳՐԱՄՈՅ	
18 դեկտեմբեր	
Անգլ. Լր.	109 1
Նարուէն ռուկի	87 3
Իմպէրիալ Ռուս	89 8
Գըրմից	51 10
Հինգ ֆրանք	—
Հինգ նոյ	122 20
Պրինձ	179

Ա.Չ.Գ.Ա.ՅԻՆ

Ամեն Ս. Պատրիարքն հինգշաբ- թի օրը տէրութեան նախարարնե- րէն ոմանց այցելութեան երթալով՝ աղագլին ինչ ինչ խնդրոց վրայ եր- կարօրէն տեսակցեցաւ:

Բ. Գուռն Պատրիարքարան զըր- կուած ծանուցաբեր մը կ'իմացնէ թէ Գրիշի Գայմագամը պաշտօնանկ եղեր և Կարին տարուելով դատաւանի ենթարկուել է:

Յիշեալ ծանուցագիրը միանգա- մայն կըսէ թէ Ժողովրդեան քան- դատներն ընդհանրապէս լսելու և քննելու պաշտօնով Կարնայ կուսակա- լութեան Մէքիմ Գընի զրկուել է, որ տեղւոյն Գայմագամին օգնա- կանին հետ գիւղերն այցելութեան ելած է:

Եօզղատի նորընտիր կառավարի- չը շարաթ օրը Ս. Պատրիարքին այ- ցելութեան երթալով՝ երկրորդէն տե- տակցեցաւ անոր հետ և Եօզղատի Հայ բնակիչները Գօհ ընկելով Եօթը տուած:

Սիրելի է յուսով որ այս խոստու- մը Մարաշի կառավարչին խոստմանը չնմանի:

Քանի մ'աղագասէր անձինք՝ ու- տիկանու թեան դուռը բանտարկեալ Ֆուրնուզի փանհօր և երկու քիշե- ցոյ համար հանգանակութիւն բա- նալով՝ մէկ երկու տուր մէջ 9113 զրոյի ողջ թղթադարմ հաւաքեցին և Ս. Պատրիարք հօր յանձնեցին: Ն. Սրապնութիւնն ալ Գումգարուի Մայր եկեղեցւոյ Տ. Սաքիս քահա- նային ձեռօք կիրակի օրը ստիկա- նութեան բանտը զրկեց:

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկո- սին ալ բաղուել և մտերիմ խորհրդ- դական հաշակաւոր Մանկունի վահ- րամ եպիսկոպոսը շարաթ օրը Կ. Պօ- լիս հասաւ և Ս. Պատրիարք հօր տու- նին իջաւ:

Գոհութեամբ կը լսենք թէ Օր- թագիւղի Հայկական Կրթարանի տը- նօրէն Մեծ. Յ. Գուրգէն էֆէնտի՝ հանգուցեալ Խօճատարեան Օգոսէն է- ֆէնտիի որդւոյմէն մին ձերպաշու իւր գիւղերով կ'ընթարան ընդու- նելով հայրաբար կը խնամէ և կըկըր- թէ:

Ուրիշ առատաստիւր աղգային մ'ալ, որ իւր անունը չուղեր հրատարա- կել, հանգուցելոյն երկրորդ օրէն, ինչպէս նաև դաւառացի աղքատ աը- ղայ մ'իւր պաշտպանութեան ներքեւ տնելով նոյն կրթարանը դրած է:

Փափաքելի է որ իւր գրչաւն աղգին ծառայող անձի մը թնոցած որբե- րուն այսպէս հայրաբար խնամ' տա- նելու ազնիւ օրինակն ընդհանրանայ աղգիս մէջ, որով գրական ամուլ ասպարիզին նուիրեալ անձինք դռնէ իրենց մահուընէն յետոյ իրենց դա- ւակաց անխամ չմնալուն յուսովը քաջալերեալ՝ աւելի հանդարտ սըր- տիւ ծառայեն աղգին:

Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ Գեր. Սրուանճաեանց Գարեգին վարդապետի նախագահութեամբ մասնաժողով մ'այս ուրբաթ իրիկուն Գատը Գիւղի թատրոնն ի նպաստ Արարատեան ընկերութեան ներկա- յացում մը պիտի տայ:

Տիւրիսի Մշակ օրագրին մէջ հե- տեալ նամակը կը տեսնենք.

Էրզրում 3 նոյեմբերի

Վաղը պատրաստվում եմ կամա- րականի հետ թողնել Էրզրումը գու- ցէ յաւիտեան: Ո՛ր, ցանկալի կը լի- նէր գէթ մի անգամ ևս ընկնել Հա- յաստան թէկուզ այնտեղ մեռնելու համար Խմայիլ և Մուսա փաշաները այսօր մեզ մօտ էին, ո- րոնցից առաջինը դառնալով գէպի ինձ ասեց. «Տօր ինձինք Լազարեանին իմ սիրոյ ողջնոյն և տօս' եղբորս որ միամիտ մնայ Արաշիւրացւոյ համար թո՛ղ սուրբ Ղուրանը ինձ իրան պաշ- տելու արժան չը համարէ, եթէ ես նոյա համար հոգ չը տանեմ, ինչպէս իմ անձիս համար»: Երբեք նա ար- տասանեց այս խօսքերը հանդիսա- լոր կերպով ձեռքերը գէպի երկինք բարձրացնելով, որից նա ինքրում էր կարողութիւն իր ցանկութիւնը տեղ հասցնելու համար: Աւելորդ- չեմ համարում կրկին ևս յիշել այն՝ ինչ սպասում է Արաշիւրացւոյ, երբ նոքա վերադառնալու լինեն իրանց տեղերը:

«Նախ՝ Սուլթանի հրամանին հա- մեմատ՝ ազատվում եմ նոքա երկու տարով բոլոր տուրքերից. նոքա աի- րանում եմ ևս անմիջապէս այն կոյ- քին ու հողերին, որ ունէին առաջ իրանց ձեռքին. նոքա ազատվում եմ միանգամայն ընդ միշտ այն հա- րըստահարոյ քիւրդ բեզերից, ո-

րոնք տասնեակներով ինչ-որ քա- կան Էրզրումի բանտերի խնայու- ները. նոքա իրաւունք են ստանա- ղանգակներ և ուրիշ եկեղեցւոյն- ներ, քիւն և արտաքին պահանջնե- րը ամեն ամենայն վտահալութեամբ և ազատութեամբ. վերջապէս նոքա կուսենան միշտ իրանց պաշտպանու- թեան համար հարկաւոր եղածին չափ դօրք, որ արդէն ուղարկված են այնտեղ ամենայն պարագայում քիւրդերին հալածելու և պատժելու համար: Ահա սոքա են այն պայման- ները, որոց կատարելը խոստացաւ քիւրդերի սպառնալիք խմայիլ Գայլ վաշան Լազարեանին և Աստուծուն, և որչափ կարողացանք ճանաչել բա- րեպաշտ փաշային, նա ամենևին նո- ցանից չէ, որ անտարբեր են գէպի իրանց խոստումը: Թող Արաշիւրա- ցիք էլ ժամանակ չիորցնեն վերագառ- նալու՝ փտահ լինելով իրանց վիճա- կի վրայ, ինչպէս այդ հաստատում են նոքա, որ արդէն յետ են գնա- ցել: Գե՛հ մնաս բարեաւ Էրզրում, մնաս բարեաւ Հայաստան, քո հա- րազատ օրդին միայն մի գիւղեր կը տեսնէ էլ իր քաղցր երազները քո ծոցի մէջ

Գրեթէ Նիկիտեան

Վաղարշապատէն հեռագրով լուր կուտան Մշակ օրագրին թէ Մանկու- նի վահրամ եպիսկոպոսին Ս. Էջմի- ածնայ վանքէն մեկնիլը մեծ ուրա- խութիւն պատճառել է ամենուն:

«Անուրանալի է, կըսէ Մշակ օ- րագիրը, թէ ոչ մի կուսակցութիւն, ոչ մի մարդ անհնար է գտնել ամ- բողջ կովկասի և Անգղիոյ կովկասի Հայ հասարակութեան մէջ, որ այդ Ման- կունի եպիսկոպոսին գէմ հակալուր- թիւն չունենայ. հետեւաբար ոչ մի մարդ չգտնուի Հայոց մոտադը չըր- ջաններուն մէջ որ Մանկունեոյն Ս. Էջմիածնէն հեռանալուն վրայ չու- րախանայ:»

Յուսանք որ այդ միասակար ան- ձին մեկնելէն ետեւ՝ Մայր Աթոռին խանդարեալ բարեկարգութիւնն ուղ- ղուի, և վանքին գործերը գոհա- ցուցիչ ընթացք մ'ստանան:

12/24 դեկտ. 1878 Օրթաքէոյ

Հայկ. կրթարան

. . . Խմագրապետ Տէր .

Հայկական կրթարանի տնօրէնու- թիւնը բերկրանօք կը ծանուցանէ Ձեր Ազնուութեան՝ որ յիշեալ հաս- տատութիւնն պատիւ ունեցաւ ի շարս իւր մեծարոյ այցելուաց արձա- նագրել և զանուն Ամեն. Խորմեան Ս. Հօր և զԱթ. Գ. Ե. վարդապե- տի Սրուանճաեանց, որք հաճեցան անցեալ երկուշաբթի օր այցելել առ մեզ առաջնորդութեամբ գիւղիս քա- րողիչ Աթ. Յակոբ Աշոտ Ե. վարդա- պետի:

Ընդունելութեան սրահն սակաւ ինչ դադար տալէն ետեւ, պատուա- կան հարք՝ կրթարանի բոլոր գասա- րաններն և նշարանը չըլնելով հուսկ ապա իջին հանգստեան ընդարձակ սրահն, ուր համայն աշակերտք յո- ւան կանգնած ծիծեռնակ մանուն սրտաշարժ երգն սկսան երգել միա- ձայն եղանակաւ:

Յուսարտ երգոյն, Ամեն. Հայրիկ աղգատիրական խանդավառ յորդոր մ'ուղղեց առ աշակերտս՝ զգածեալ մանաւանդ, ինչպէս կըսէր, այն գե- ղեցիկ երգէն որ հոգ երուզմ միմուն- ջըն է հայրենասէր պանդխտին: Բարձ- րագոյն դասու աշակերտներէն Պ. Գ. Թանկէրեան, իջողատախանի Ամեն. Հօր յորդորանայ, կարճաօտ ուղերձ մը ընթերցաւ ի գիմաց համայն ա-

Հակերտայ շնորհակալութեան և ևրախտագիտութեան արտագլխի զգացումներն յայտարարելով և նորա օրհնութիւնն հայցելով կրթարանին և ուսանողաց վրայ ի խորմեան Հայրիկ հաճեցաւ ցօղել իւր օրհնութիւնն աշակերտայ վրայ և խրախուսել ըզնոստ յաշխատասիրութիւն և ի հայրենասիրութիւն :

Հաճեցէք, Տէր խմբագրապետ, մեր ջերմ շնորհակալաց թարգման լինել արտուսական Մասնացդ միջոցաւ առ Ամեն խորմեան սրբազան, որպէս և առ Գ. Վ. Սրբանձտեանց և Յակոբ Վ. Աշոտ, առ արժանընտիր հարս Հայաստանեայց եկեղեցւոյ :

Մնամք խորին յարգանք
Հիմնագիր Տնօրէն
Յ. Գալստի

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Բնիկ Տիփուսեցի Հայադէր Միլերտի թաթմուրեան խանութեանց քառասունամեայ միջնահասակ անձ մը, գլխոյն մազերը ընչացքը և աչքերը սև, ունի ու բերանը միմիկ խել մը տարիներէ հետէ իւր հայրենի քաղքէն անյայտացած ըլլալով մինչև ցարդ ուր կեցած ըլլալը չգիտցուի :

Յիշեալ անձին վրայով եթէ ոք տեղեկութիւն ունի, թէ ո՛ր կը բռնակի, ինչո՞վ կ'ըզարկ կամ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի, ո՞ղջ է թէ մեռած, կը խնդրուի որ Ազգ. Պատրիարքարանի տեղեկութիւն հաղորդէ անմիջապէս :

Նաև կը խնդրուի Գերատառի տառադրեաներէն, որ իրենց վիճակային քաղաքաց և գիւօրեկց մէջ վերոյիշեալ անձին հետքը որոնել տալով, արդիւնքը փութով ի Պատրիարքարան տեղեկագրել բարեհաճին :

16 դեկտ. Պատր. փոխանորդ
Պարրքին Հայոց Վերս. Լաբր.
Կ. Պոլիս խօսքմեան

Ազգային Հիւանդանոցի պատուարժան Հոգաբարձութիւնն հետեւեալ բարեգործական տեղեկութիւնները զրկած է մեզ ի հրատարակութիւն :

Հանգուցեալ Մեծ. Պօստ Է. Վարդանանի ժառանգորդ Մեծ. Յակոբեան ազալ արգանեան յիսուն, Ազնուտոյ տիկին Հանրմաքսան և հինգ, և օրիորդ Երմոնիա քսան և հինգ, ընդ ամենը հարիւր Օսմանեան լիւր, յօժարակամ հաճեցան նուիրել ազգային Հիւանդանոցի, ի յաւերժական յիշատակ ազգասէր հանգուցելոյն, այն պայմանաւ որ ամեն տարի յաւերժ տնի Ս. Պօղոսի և Պետրոսի առաքելոց պաշտօն և Ս. Պատարագ մատուցուի Ս. Փրկչի մատրան մէջ :

Հոգաբարձութիւնն առ այս կը փութայ իւր խորին և սրտագին շնորհակալելը մատուցանել ազգասէր նուիրատուաց, որք բարեհաճեցան յիշել ազգային նոյն նուիրական յարկին հորիւրաւոր խղճալիներն և միթմարել զայն :

Բ.

Էնկիւրցի Թօրաթ օղու Տիփուրաքի Էֆենտի, որ աֆիօնի այցելու քննիչ (վիզիթատ) է ելեր, ուստ ըրեր է որ իւր քննութեան փոխարէն ընդունած աֆիօնի կէսն Հայոց և կէսն Յունաց Հիւանդանոցաց նուիրէ, իւր ունի դուրի նպատակը այս անգամ ի գործ դնելով հաւաքած 8 քաղ աֆիօնի կէսը 4 քաղ նուիրեց Հիւանդանոցին, որն որ ծախսւելով (882 1/2) զը (Ս. Օսմ. 100 զընչ) հասցիւր գոյացաւ ի նպատակ Հիւանդանոցի անուակին :

Յիշեալ Էֆենտիի սոյն առաքինական արարքը հոգաբարձութիւնն գովելով, առայն թէ իւր խորին շնորհակալելը և թէ խղճալի պատասխարելը երախտագիտական զգացումը հրատարակու ըլլայտնէ :

Գ.

Հոգաբարձութիւնն բերկրութեամբ կը ծանուցանէ մեծարգոյ ազգայնոց թէ իրենց առաքինութեամբ խղճալի պատուարելոց նախածանօթ եղող Մեծապատիւ երկու եղբարք այս անգամ ևս փութացին սա տաղնապալից ժամանակին իրենց գլխութեան ձեռքը դէպ ի խղճալի պատասխարելոց ուղղելով շնորհել քսան և մէկ հատ Օսմանեան ոսկի :

Սոյն շնորհը որչափ հոգաբարձութեանը խրախուսանք նոյնչափ և պատասխարելոց սիրովանք պատճառած ըլլալով թէ մեր շնորհակալքը և թէ խղճալեաց և բախտագիտական զգացումը կը փութամբ հրատարակու յայտնէ :

Գ.

Քաղանձի արհեստաւորք իրենց մէջ հանգանակած դրամով առած 424232 թիւ երկաթուղոյ արժեքում մը, հազար երկու հարիւր զի ֆլէնտի Յակոբի Եւտորաբութեամբ պարտաւորակ մը, և երկու հատ քսանոց թուղթ նուիրեցին ազգային Հիւանդանոցի խղճալեաց :

Հոգաբարձութիւնն յիշեալ արհեստաւորաց սոյն նուիրեան հրատարակելով շնորհակալութիւն կը յայտնէ միանգամայն որք փութացին այս նեղ և անձուկ ժամանակս միթմարել Հիւանդանոցի խղճալիներն ու վայելել անոնց սրտադին օրհնութիւնն :

15 դեկտ. 1878 Մնամք յարգանք
Գրատ. Հիւան. Ի զիմաց Հոգ. Հիւ.
Ատենապետ Ստենապետ
Տ. Վեթ. Լէրմանեան Մ. Յալքեան

ԱԶԳ

Հոգաբարձութիւնն Ս. Փրկչեան Հիւանդանոցի մօմտան դրամական մասը որով փնտիր մէջ պահելու հարկադրուած ըլլալով ազգային վարչութեան Քաղաքական ժողովոյ հաւանութեամբ արժաթ դրամի վերածեց յիշեալ մօմտան դրամական գործողութիւնը, հետեւեալս ի գիտութիւն մեծարգոյ ազգայնոց հետեւեալ ցանկը կը հրատարակէ :

ՅԱՆԿ

Եկեղեցւոյ մեղրամօմերն քաղ մէկ արծաթ մէճիւ, 0/0 ին 2 զը գեղջով .	
Ա. Հարսանեաց կերտն 7 քալոց 800 զը	Բ.
» » 5 1/2 » 400 »	Գ.
» » 4 1/2 » 250 »	Դ.
» » 3 » 120 »	Ե.
» » 2 1/2 » 100 »	Չ.
» » 2 » 70 »	Է.
» » 1 1/2 » 50 »	Ը.
» » 1 » 50 »	

Հոգաբարձութիւնն յիշեալ կարգադրութեան հետ բարեգործ ըլլալով նաև մօմերուն տեսակը, հրաւիր կը կարգայ սրտաւարժան թաղական խորհրդոց և մեծարգոյ ազգայնոց, որպէս զբարեհաճին պէտք եղած մօմերն ազգային Ս. Փրկչի մօմատունէն ստնուր որ ի Մեծ Նոր խան միջնայարկ թիւ 49 : Աւելորդ է ըսել թէ անկէ գոյացեալ չափ ազգային Հիւանդանոցի խղճալեաց յատկապէս ըլլալով, նուիրական պարտք մը կատարած ըլլան անոնք որք ուղղակի ազգային մօմտան գիտելով հոն կը ձգեն իրենց դրամը, հոն կէ տնելով իրենց պէտք եղած մօմերը :

15 դեկտ. 1878 Մնամք յարգանք
Գրատ. Հիւան. Ի զիմաց Հոգ. Հիւ.
Ատենապետ Ստենապետ
Տ. Վեթ. Լէրմանեան Մ. Յալքեան

ՆՈՐ ՀԱՆՈՍԱԿՆԵՆԻՍ ՄԵՍԻԱ ՄԸ

(Եր. և վերջ Խե- Բե- 2214)

Այժմիկ հիւանդ կը խօսի, կանիծէ կը ծեծէ ու ծեծել կուտայ և ինքը դանդաղ տելով լանտարիկէ կուտայ, և վերջը ժողովուրդը նոցա դէմ զրգուելով կը յայտարարէ որ այն երեք անձիքը դուրս չելլեն . . . իսկ ինքզինք անմատչելի և անբռնարարելի կը հրատարակէ, ինքզինք ազգի և եկեղեցւոյ բարեկամ, և զանոնք անոնց իբրև թշնամի հռչակելով եկեղեցւոյ բեմին վրայ, և ինչո՞ւ, վասն զի ինք կիւրէ և, դատաւարանէ և բանտէ ազատ է, մի խօսքով անդառաղեղ առիւծ մ'է, և ժողովուրդը իր մէջ զինքը ազատ թողցած է, ուղածները փարատելու հա-

մար . ա՛հ, որչափ հեռու ենք տակաւին լուսաւորեալ ազգաց կարգն անցնելէ, զի այն տեղ կամ ամեն մարդ զնուած և զբաժնորուած են, իսկ վերջիկ մաս մը անզէն լքուած են . հոն մեծ ու պղտիկ միջնայն օրհնքով և միջնայն չափով կը շարունակեն, բայց հոս մեծ տարբերութիւն կայ, զի տկարը ու սակաւթիւրը, թէև իրաւացի և արդար, անպաշտպան և անօգնական են . իսկ անիրաւն ու բռնաւորը իրենց ընթացիկ մէջ քաջաւորուած, համարձակ կ'անիրաւեն, կը բռնարարեն ու կը յափշտակեն, բայց անպատիւ են . . . :

Խմբագիր Տէր, մենք կը բողոքենք, որ որ անկէ, յանուն մարդկութեան և արդարութեան, մենք անձնական շահը հասարակաց շահուն մէջ չենք փնտրուր . յօգուտ ազգի և ազազային եթէ մեր անձերն իսկ զոհենք՝ ոչինչ են, զի մենք նախապատու չենք, այն մարտիրոսներէն, որոնք ոչինչ խնայեցին յօգուտ ազգի և մարդկութեան . մենք ինքզինքնիս երջանիկ չ'ըլ համարենք որ այն մարդկութեան զոհերուն նման այսօր կը հաւածուինք և կ'արգիւրենք դուրս ելլելու այնպիսի կղերականի մը հալածանքով, որ իր կողման և ազգին պատիւ չըրերէ դատ՝ նախատինք և անարգանք մ'է պատմութեան և ապագայի առջև :

Մենք կարելի է որ Ազգային Պատրիարքարանի և Հայրախանով վարչութեան շնորհիւ ազատինք այս հաւատարմութիւն, միջնայարեան բեկորի ձեռքէն, բայց խնարհարար կ'ազգայնեք զիրենք որ իրենց ապրանքին զինը լաւ հասկնալով ապաւազային մեզ նման ուրիշներ ալ հալածել չի տան՝ այսպիսի մէկը չ'որ և է Հայաստանի տեղ մը առաջնորդ կամ պաշտօնեայ կարգելով իսկ հիմակուրէն անկեղծօրէն խորհուրդ կուտանք այն տղայիններուն, որոնք մեր գծարդութեանը բաղադիր ըլլալու էն զանի պաշտօնեայ ունենալու տարաբաղութիւնը պիտի ունենան, ըզգուշանան և լաւ խորհին սորա անցելով վրայ :

Վատարներ, Ստամբուլներ, Արախուներ, Գետապարձներ, այս նորին քով աշակերտութիւն թող ընեն, որպէս զի ազգ ծախսելուն վրայ այս հաւատարմութիւնն ալ աւելի սովորին :

Նրկու խօսք ալ . ով որ կուզէ օրհուսականի մը հետ գործ ունենալ, թո՛ղ Այժմիկ հիւանդ գործ տայ, և նորա հետ գործ ունենայ . այո՛, կարելի է՝ այժմ մեր ըսածները անհաւատարմութիւն . բայց ժամանակը դանոնք պիտի ստուղէ, եթէ երբէք Պատրիարքարանը կամ վար-

չութիւնը ասի իր պաշտօնին մէջ կամ ուրիշ տեղ հաստատուելու գծարդ խորհուրդը ունենայ, զի նա ոչ միայն Ազգի և եկեղեցւոյ թշնամի է իր այս ընթացքով, այլ վերաբարձին, վերաբարձին . . . և իր սրբազան կրօնին :

Խմբագիր Տէր, առ այժմ հաճեցէք յանուն արդարութեան և Հայրութեան սոյն մեր խանար՝ բողոքը Ձեր ազգուղու Մասնաց սար զետեղելու, որուն համար կանխաւ մեր անհոն շնորհակալութիւնը կը մատուցանենք խանարհարար :

Որով մնանք Ձեզ և Ազգիս անձնաւոր բարեկամք
(Պարտքմե-Բե- 2214)

Ի Ա. Ս.

Նիգամիյէ Սարաճիւնէ անպարը իլէ Գալէվիլեանէ անպարընա շուրու-թը մեզարքէյէսիյէ միւսպիյեա օլու-նաճալը իլւն օլունան երկիրմի պէշ պիւն գըյէ եալըլ քէօսէյէ իլէ օն պէշ պիւն գըյէ պէեազ քէօսէյէ վէ օն պէշ վէ սէքիլ գալէմ դունտուրա չիլիլէ-րի իլէ օլթան վէ սոյա իլիլիքէրի վէ ըվէնտուգ պէգիւնին քեանունի էվ վէլէն իկիրմիճի չհարէնպիհ կիւ-նիւ թէքքար միւնաքասպարը իծրա օլունար ոգ գարարը գաթիլէրի վերի-լէճէյիտէն, իլթա իլթմէկէ թալիլ օլ-լանյարն եվլմի մէզքիլուտէ սաաթ եէտիտէ Տարի շուրայի սաքէրիլէ կէլ-մէլէրի :

17 քեանունի էվլէլ 1878

Պապը Սէրասքէրի

Նիգամիյէ էրպիսէ անպարը իլուն միւսպիյեա օլունաճալը էվլէլէ իլան քըլլնան սէքսէն պիւն ատէա տէվէ մարգալը վէ իքի երկւ եարտալը մա-դարա իլիլիլինին իծրա իտիլէն միւ-նաքասալընա իքի երկւ եարտալը հավի օլան պէհէր մաքարալ իկիրմի պէշ փարայա թալիլի էօհաէսիտէ քալըլ վէ քարարը գաթիլի տալիլ վերիլմիլ օլմալլէ պու կիւն ազլամա քասար ուսուլի վէլչ իլէ երկուսէ պէշ թէնիլլինէ թալիլ օլանյարն Տարի ճուրայի սաքէրիլէ կէլմէլէրի :

18 քեանունի էվլէլ 1878

Պապը Սէրասքէրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Քանի տարիներէ ի վեր Մանչէսթըրի և Կ. Պօստ մէջ վաճառականութեամբ զբաղող ՈՍԿԵՆԱՆ ԱՐՍԵՆԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ ընկերութիւնն, այս անգամ իւր հաշիւները տեսնելու համար ընկերութեան բուն կեդրոնատեղին՝ այն է՝ Մանչէսթըր գումար-ւելով, բոլոր հաշիւները տեսած, և երկու կողման հաճութեամբ և Մանչէսթըրի Պօստային պաշտօնական տեղեկութեամբ՝ Արսէնեան Ոսկեան աղայն ընկերութեան բոլոր ապրանքն և պարտ ու պահանջն իւր ընկեր և որդի Մըսթըր Արսէն Ո. Արսէն-եանին վրայ դարձուցած ու յանձնած, և ինքն իւր բաժինն աւելելով ընկերութեան հրաժարած ըլլալով, այսուհետեւ յիշեալ վաճառատան գործողութիւններն Ո. Ո. ԱՐՍԵՆԵԱՆ Պօստային (Ֆիրմա) Մըսթըր Արսէն Ո. Արսէնեանին կը պատկանին, և վերոյիշեալ Արսէնեան Ոսկեան աղան բնաւ գործին մէջ մասնակցութիւն չունենալը Մանչէսթըրի Պօստային կողմանէ լրացուց միջոցաւ պաշտօնապէս ծանուցուած է 1878 դեկտ. 9 ին (ըստ Ն. Տ.), և Մըսթըր Արսէն Ո. Արսէնեան ալ յատուկ շըր-ջարեակախաւ յայտնած ու ծանուցած է :

Հետեւարար յիշեալ շըրջարեակախան, որոյ թարգմանութիւնն ի ստորեւ հըրա-տարակուած է, կը հասկցուի որ վաճառատունն Անդրիոյ տէրութեան հպատակ ե-ղող և Մանչէսթըր գումարը վերոյիշեալ Մըսթըր Արսէն Ո. Արսէնեանին վերաբեր-եալ ըլլալով, ինչպէս ասկէ առաջ, նոյնպէս և այսուհետեւ իւր յաճախորդները զո՛հ պիտի ընէ :

Չարմաճըլար Երուշու թիւ 35

Կ. Պօլիս 1878 դեկտ. 11/25

Սհաւաթի վերոյիշեալ շըրջարեակախանին յԱնդրիոյնէ թարգմանութիւնը .

Տեալք .

Պատիւ ունիմ ծանուցանել ձեզ թէ Ոսկեան աղա Արսէնեան իւր անձնական տկարութեան պատճառաւ գործէ քաղուած է, և թէ այսուհետեւ մեր վաճառա-տան բոլոր գործողութիւնները մի միայն իմ հաշուոյ վերաբերեալ ըլլալով ԱՐՍԵՆ Ո. ԱՐՍԵՆԵԱՆ տիտղոսով պիտի շարունակուին :

Նախորդ ընկերութեան պարտ ու պահանջն ալ ինձ կը պատկանի :

Մանչէսթըր Գալիս Սթրիթ 16

1878 դեկտ. 9

Ընդունեցէք . . .

Ա. Ո. ԱՐՍԵՆԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿԱՌԻԹԵՒՆԸ

ԲԱՆԱԼԻ

ՀԱՅԵՐԵՆ ԶԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ

Գրեց Մ. Մամուրեան

Ահա ասիկ զեղեցիկ մէջմտ մը, որ Կամուրեան էֆէնտիկ աշխատաւորութեամբ ժուտ գտնելով մայրենի լեզուն ուսման մէջ, կառավարողէ տալիքները չարագիր լինելու, չբարձրացնելով որ անոնք քերականութեան տաղուկի շրջանէն անցնին:

Այս գրքիցը Զմիւռնիոյ Տէմէտեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եֆէնտիկ Զիլին, կիրքէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Գին 30 սանթիմ:

Կ Ի Յ Լ Օ Մ Թ Է Լ Լ

ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ

Թարգմանեաց Գաղղիերէնէ

Մ. Ա. Կալապուտեան

Անգամ քարտուղարաց զիւսնին արտաւորէ գործոց պաշտօնատան որ ի Բ. Գունն

Շիլլեր Գերմանացի հռչակաւոր հեղինակին ընտիր գործերէն մին է: զոր սոյն ողբերգութիւնը մէկ հինգ-նոց լիզմադրամի կը վաճառուի Վ. Յ. Մարգարեանի գրատունը Մէրճան շարքը թիւ 37 և ամեն գրավաճառաց քով:

ՆՈՒՆԻՐ ԿԵԼԱՆԳԻ

ՊԵՏԱԿԱՆԱԿԱՐԳ

Բաղկացեալ 16 պատկերազարդ երեսներէ, որոց չորսը ազգայն վերաբերեալ խաղաղիկներ են: Խաղաղիկներէն մին՝ որ տեսակ տեսակ ծաղկեր ունի, պէտք է գիշեր ատեն ճշրոյցի լոյսին դէմ՝ բռնել և ստուերը ձերմակ պատի վրայ ցուցունել, նոյն յետոյն սոյ պիտի տեսնուի Յիսուս փրկչի պատկեր մը պատին վրայ դըրուած:

Իր գտնուի Սուլթան Համամ Ա. շրջ էֆէնտի խանի դէմ թիւ 4 Նշան Կ. Պէրսէրեանի (հեղինակին) վերադրատունը, և նոյն փողոց թիւ 14 Չարգարեան գործարանը և բոլոր գրավաճառաց քով:

Ն ՈՒ Ն Բ

ԱՌ ՈՒՍԵՆՈՂՍ

Գ. Վահանիէն

Կաղանդի աւելի նուէր տալու համար գեղեցիկ գրքից մ'է օգտակար պարունակութիւններով լի:

Կեդրոնատեղին է Պոլիս Մէրճան Վ. Մարգարեան գրատունը, ինչպէս նաև կը գտնուի ամեն Հոյ գրավաճառաց քով: Գին 4 զրը ընթացիկ դրամ:

ԹԷ ԻՆՉ ՇՈՒՆԵԱՆԻ ՊԵՐԼԻՆԻ

ՎԵՐՈՒՄԻՆՈՎԻՆ

Գրեց Պ. ՄԵՆԱՍ ԶԵՐԱՉ

Հայկական խնդրոյն վրայ Պէրլինի վեհաժողովին մէջ եղած վիճաբանութեանց և որոշմանց պատմութիւնն է՝ հանդերձ ուշիմ խորհրդաբանութեամբ, որ խնդրոյն վրայ բաւական լոյս կը տալեն և ապագայ յայտերը կը բացայայտեն:

Ամեն Հոյ գրավաճառաց քով կը գտնուի: Գին մէկ ասանոց լիզմադրամ:

ՊԵՏԱԿԱՆԱԿԱՐԳ

Հ Ի Ն Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ի

Ի պէտք աշխարհի վարձարանաց

Երեստողիմ

Ի տպարանի Սրբոց Յովակիմեանց


Ամեն Հոյ գրավաճառաց քով կը գտնուի, Գին 7 զրը:

ՆՈՐ ՕՐԱՏԱՐԱՅԵ

1879 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԳՐԱՐԱՆ

Տպարանից Զարգացման

Կը ծախուի գին 20 փարա մէջին



ՇԻՐԲԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒՆԵԱՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 ՈՒՐԱՄԹ ՕՐԷՆ ՍԵՍԵԱԼ

ՄԵՆԱՅԻ ԴԵՏԵՄԲԵՐ 31

ԲՈՍՖՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՒՆԵԱՆԵՐԸ

Ժ-	Ե-բ-դ-ա-կ-ն-է-լ-է-ր-+	Թ-
2 15	Եկնիմաստայէն Մէզարու. Պէյլիքաւեր, Թարապիւր, Եկնիքէյ, Սթէնիս, Էմիրի. Պոյաճ. Բ. Հիսար, Պէյլիք, Եկնիմ. Մէզարու. Պէյլիքաւ. Թարապիւր, Եկնիք. Էմիրի. Բ. Հիսար, Պէյլիք:	23
3	Եկնիմ. Մէզարու. Պէյլիքաւ. Թարապիւր, Եկնիք. Էմիրի. Բ. Հիսար, Պէյլիք:	32
3 15	Եկնիմ. Մէզարու. Պէյլիքաւ. Թար. Եկնիք. Սթէն. Էմիրի. Պոյաճ. Բ. Հիսար, Պէյլիք:	33
4 30	Եկնիմաստայէն Մէզարու. Պէյլիքաւ. Թարապիւր, Եկնիք. Սթէն. Էմիրի. Պոյաճ. Բ. Հիսար, Պէյլիք, Արնամ. Գուր. Օրթաք. Պէյլիք:	48
5 30	Մէզարու. Պէյլիքաւ. Թար. Եկնիք. Էմիրի. Բ. Հիսար, Սթէն. Գուրու. Օրթաք. Պէյլիք:	23
6 30	Եկնիմաստայէն Պէյլիքաւ. Թարապիւր, Պէյլիք, Եկնիքէյ, Էմիրի. Գանլըճա, Բ. և Ա. Հիսար, Գանլիլի. Սթէն. Պէյլիք. Օրթաքէյ, Գուր. Պէյլիքաւ. Թարապիւր, Եկնիք. Էմիրի. Բ. Հիսար, Սթէն. Օրթաքէյ, Պէյլիքաւ:	2
8	Բ. և Ա. Գալապուտեան Եկնիմաստ. Մէզար. Պէյլիք. Թարապիւր, Պէյլիք, Եկնիք. Էմիրի. Պոյաճ. Բ. Հիսար, Պէյլիք, Սթէն. Գուրու. Օրթաքէյ, Պէյլիքաւ:	32
10	Մէզարաւորեալն Պէյլիքաւ. Թարապիւր, Եկնիքէյ, Էմիրի. Բ. Հիսար, Սթէն. Օրթաքէյ, Պէյլիքաւ:	22

Ա-բ-դ-ա-կ-ն-է-լ-է-ր-+

2 30	Արնամաւորեյն, Գուրու. Օրթաք. Պէյլիքաւ:	20
3	Արնամաւորեյն, Գուրու. Օրթաք. Պէյլիքաւ:	25
3 30	Պէյլիք. Արնամ. Գուրու. Օրթաք. Պէյլիքաւ:	22
4 15	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյլիք. Գալապուտեան:	20
5	Արնամ. Գուրու. Օրթաք. Պէյլիք. Գալապուտեան:	22
11	Արնամաւորեյն, Եկնիքաւոր. Կամուր:	20

Ա-բ-դ-ա-կ-ն-է-լ-է-ր-+

2 15	Պէյլիք, Բաշապ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանլիլի. Վանիքէյ. Չէնիքէյ. Պէյլիք. Գուր. Գալապուտեան:	24
2 15	Արնամ. Վանիքէյ. Չէնիքէյ. Պէյլիք. Գուր. Գալապուտեան:	2
2 15	Բ. և Ա. Գալապուտեան Մէզար. Պէյլիքաւ. Թար. Պէյլիք, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանլ. Վանիք. Չէնիքէյ. Պէյլիք. Գուր. (Ուրթաք. օրերը ժամ 3 ին):	28
4	Պէյլիքաւ. Պէյլիք, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանլ. Վանիք. Չէնիքէյ. Պէյլիք. (Բաշապ. օրերը ժամ 3 ին):	34



ԱՅՆԻՒՆ ՎԵՐԿՈՐԸ

Ով որ իր մաղերուն թափելը չուզեր, «Այլերի վիճի» կոչուած մաղի անուշահոտ ջուրէն գործածելու է. ուրիշ ամեն տեսակ մաղի ջուրերը կամ լիւզերը՝ որ մաղ չի թափելու համար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ են. իսկ վիճիքի օգուտը միլիոնաւոր փորձերով տեսնուած է, և Պոլսոյ ու Գալապուտեան մէջ օր օրի գործածողներուն թիւը կուսնայ: Անոնք որ իրենց մաղերուն գեղեցիկութիւնը կորսնցնելու վրայ են, չտեսով գործածեն ալ ջուրէն որի վերջոյ չզղջան: Թափելու վրայ եղող մաղերը կը հաստատեն ու կամրապնդեն, թափածներուն տեղը մաղ կը բուսցնեն երբոր մաղերուն արմարը փաստուած չէ, ու ճերմկած մաղերը անպատճառ կը նախկին բնական դոյնին կը բերեն, գործածելուն կերպը չիշխուեն հետէն. կը ծախուի Կ. Պոլիս Գալապուտեան և Եկնիքաց Ամերիկայի Մաղադան:



Սնուշահոտ օճառ, մորթի կը կախուցնեն ու լեղի ջուրով ալ կը փեր: Բերի, տեսակը խիստ աղին ու գինը շատ ավան է. կը ծախուի Կ. Պոլիս Գալապուտեան և Եկնիքաց Ամերիկայի Մաղադան:



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱԶԱՆ

Կ. Պոլիս Գալապուտեան և Եկնիքաց Ամերիկայի Մաղադան կը ծախուի, աղին ճերմակ կուսնեն, ու սեղանի ծածկոց և այլն, սեղանի արմարած պատառաքող, գրգռու և այլն. կաղի Լամբաներ, սեղանի ճերմակ յախճապակէ սպասք Անգլիոյ տեսակէն, քարեօղանք, փերէ ծածկոց, քիւսնէ սալան և այլն, խոհանոցի վերաբերեալ անօթներ, կուրի գործիքներ, և ուրիշ անթիւ պիտանի վաճառք կը ծախուին Գալապուտեան քով:

5 30	Պէյլիք, Բ. Գանլ. Ա. Հիսար, Գանլ. Վանիք. Չէնիքէյ. Պէյլիք. Գուր. Գալապուտեան:	24
8 45	Պէյլիքաւ. Պէյլիք, Բաշապ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանլ. Վանիք. Չէնիքէյ. Պէյլիք. Գուր. Գալապուտեան:	25

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՒ ՆՈՂՇՈՐԵՆԱՆԻԵՐԸ

Ե-բ-դ-ա-կ-ն-է-լ-է-ր-+

3	Գալ. Խան. Պէյլիք. Գուր. Օրթ. Պէյլիք. Չէնիք. Սթէն. Գանլ. Ա. և Բ. Հիսար, Գանլ. Էմիրի. Եկնիք. Պէյլիք, Թարապ. Պէյլիքաւ. Եկնիքաւ:	23
4	Պէյլիք. Օրթաք. Արնամ. Բ. Հիսար, Էմիրի. Եկնիք. Թարապ. Մէզար.	23
5 30	Պէյլիք. Օրթաք. Արնամ. Պէյլիք. Բ. Հիսար, Պոյաճ. Եկնիք. Պէյլիք, Թարապ. Պէյլիքաւ. Մէզարաւ. Բ. և Ա. Գալապուտեան:	32
6 30	Խան. Պէյլիք. Գուր. Օրթաք. Պէյլիք. Չէնիք. Արնամ. Գանլ. Բ. Հիսար, Պոյաճ. Եկնիք. Թար. Պէյլիք, Թարապ. Պէյլիքաւ. Մէզարաւորեալ:	25
8	Պէյլիք. Օրթաք. Արնամ. Բ. Հիսար, Էմիրի. Եկնիք. Թարապ. Պէյլիքաւ. Մէզարաւորեալ:	22
9 30	Պէյլիքաւ. Օրթաք. Արնամ. Պէյլիք. Բ. Հիսար, Էմիրի. Սթէն. Եկնիք. Թար. Պէյլիք. Մէզ. Եկնիք. (Ուրթաք. օրերը ժամ 10 ին):	23
10 15	Պէյլիք. Բ. Հիսար, Պոյաճ. Էմիրի. Եկնիք. Թար. Պէյլիքաւ. Մէզար. Եկնիքաւ. (Բաշապ. օրերը ժամ 10 ին):	23
10 40	Պէյլիք. Օրթաք. Արնամ. Պէյլիք. Բ. Հիսար, Էմիրի. Սթէն. Եկնիք. Թարապ. Պէյլիքաւ. Մէզարաւ. Եկնիքաւ:	48
11 15	Պէյլիք. Բ. Հիսար, Պոյաճ. Էմիրի. Եկնիքէյ. Թար. Կալապուտեան. Մէզարաւ. Եկնիքաւ:	32

Ա-բ-դ-ա-կ-ն-է-լ-է-ր-+

3 15	Ուրթաք. Արնամաւորեյն:	20
3 45	»	22
10 15	Գալապուտեան, Պէյլիքաւ. Օրթաք. Գուր. Արնամ.	20
11 10	Գալապուտեան, Պէյլիք. Օրթաք. Գուր. Արնամ.	2
11 40	Պէյլիքաւ. Օրթաք. Գուր. Արնամ.	20
12	Պէյլիքաւ. Օրթաք. Գուր. Արնամ.	25

Ա-բ-դ-ա-կ-ն-է-լ-է-ր-+

4	Խան. Գուր. Պէյլիք. Չէնիք. Վանիք. Գանլ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյլիք:	24
9 45	Գուր. Պէյլիք. Չէնիք. Վանիք. Գանլ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյլիք, Մէզարաւ. Բ. և Ա. Գալապուտեան:	28
10 30	Գալապուտեան. Գուր. Պէյլիք. Չէնիք. Վանիք. Գանլ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյլիք, Թարապ. Պէյլիքաւ.	28
11 10	Գուր. Պէյլիք. Չէնիք. Վանիք. Գանլ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյլիք:	24
11 40	Գալապուտեան. Գուր. Պէյլիք. Չէնիք. Վանիք. Պէյլիք:	22

Այս քաղաքը շարաւր երեք անգամ եր Կրտսերապետի, երեք շարքի, հինգ շարքի և շարքի օրերը: Բաժանորդագրուածներ տեղեկ են Ղալապուտեան Պաշտօնաւար ճատտէսի թիւ 198, Ղոթո իսկ Մալապի խմբագրատունը:

Իսկ պաշտօնաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց անհանկները:

- ԻՋՄԻՐ. Ստեփան աղա Տէօփեան.
- ՆԻԿՈՍԻՒՄ. Խոսրով էֆ. Լակիճեան.
- ՊՐՈՒՍԱ. Խոսեփան աղա Թանկէրեան.
- ԹԵՔԵՐԵՍԱԿ. Ս. Արխանգէլս աւագ քահանայ Ֆիլիպիան.
- ՅՐԱՊԵՆՆ. Խաչատուր Կալապուտեան ԿԱՐԻՆ. Կարապետ ապառաչի Զաքարիան.
- ՎԱՆ. Կարապետ աղա Ղալապուտեան.
- ՄՈՒՇ. Միլիտոյ աղա Փօթիկեան.
- ԵԱՇ. Միլիտոյ խաչիկեան.
- ՅՈՐԴԱՆ. Ֆերիտ աղա Ս. Ֆերիտեան.
- ԵՐԶՆԱՍ. Թաղաւոր աղա Բաղրամեան.
- ՄԱՆԻ. Սուրեն ՍԱՐԻ. Սարգիս.
- ԻԼԻՐԻ. Զաքարիէն ապառաչի Զաքարիէն ապառաչի մէկ և մի Զաքարիէն Պէյլիքաւ:

ԽԻՐԱԳԻՐ—ՏՆՈՐԷՆ

Կ. Ս. ԻԹԵՒԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԻՍԿԱՐԸ

ՂԱԼԱՍԻ ԿՕՐԸ ԽԱՆ